

(2) Տե՛ս Եւբուսային ճայիսի 4-16, ԹԵՐԹԸ ։

(Օգոստոսի ամսու ամսագրի Մարտի 15-ին) կայսրը, որ իւր մեծագործ տերութեան ներքեւ գտնուող ամէն ազգի հայատեալաց, ինչ կրօնքէ կ'ուզէ թող ըլլայ, ամէն կերպ բարօրութեանը համար հայրաւար խնամք կը տանի միշտ, ցանկալով իւր մարդասիրական խնամոց նոր ապագայ մը տուլ, հաճեցաւ կայսերական ինքնագիր բարձր հրովարտական վերահաստատել կրօնական ընդարձակ ազատութիւնները և արտօնութիւնները որ շատնցմէ ի վեր իւր վեհափառ նախնիներէն շնորհօգած են օսմանեան տէրութեան քրիստոնէայ հայատեալաց եկեղեցականացը: Այս կայսերական հրովարտակը՝ որ 1853 մայիսի 25-ին գրուած է, և որուն թարգմանութիւնը հրատարակեցինք լրագրոյս նախնիմաց թերթին մէջ, օսմանեան տէրութեան հայատեալ իւրաքանչիւր ազգի հոգեւոր առաջնորդաց աւանդեցաւ Վարձրագոյն Վոնէն՝ ձեռամբ արտաքին գործոց պաշտօնեայ բարձրագոյն Ռէշիտ փաշային, որ կայսերական հրովարտակին միտքը բերնով ևս բացատրելով, իմացուց զատ զատ ամէն մէկ ազգի հոգեւոր հովիւին թէ օսմանեան կառավարութիւնը ի սկզբանէ անտի կը ցանկայ և կ'աշխատի որ իւր հայատեալ ազգերը հանգիստ և անդորր ապրին իւր հովանաւորութեան ներքեւ, և իրենց կրօնական արարողութիւնները առանց մէկ արգելքի ազատութեամբ ի գործ դնեն իրենց վաղեմի սովորութեանը համեմատ և ըստ արդարաւոր կամոց վեհափառ Սուլթանին և եթէ ժամանակ առ ժամանակ կառավարութեան նպատակին դէմ սպորինաւոր գործքեր տեղի ունեցնէր են ի մասին կրօնական ազատութեան, այն դէպքերը այսուհետեւ ամենեւին պիտի չիկրկնուին, ըստ որում տէրութիւնը ամէն տեղադրարարական զօրաւոր հրամանագիրներ յուղարկեց ըստ այսմ մասին:

Այսպիսի մարդասիրական յայտարարութիւն մը, ինչպէս իւրաքանչիւրը կրնայ երեւակայել, մեծ ուրախութիւն և մխիթարութիւն պատճառեց քրիստոնէայ հասարակութեան, նմանապէս Հրեայ ժողովրդեան, որ ըստ ամենայն մասին մասնակից է կայսերական այս շնորհալոյ:

Իւրաքանչիւր ազգի պատրիարքարանք ի ներկայութեան երեւելոյց իւր ազգին, հանգիստութեամբ կարգացուցեալ յիշեալ կայսերական հրովարտակը, որուն ազգեցութիւնը անքան մեծ եղաւ բոլոր հասարակութեան վրայ, որ իւրաքանչիւր ժողովրդեան հոգեւոր հովիւները և աշխարհական երեւելիները, ցանկալով իրենց համազգի ժողովրդեան երախտագիտական զբաղմունքը յայտնել օգոստոսի ամսու ամսագրի Մարտի 15-էն, փութացան յատուկ ազերտութիւն մը գրել զատ զատ, որուն մէջ իւրաքանչիւր հայատեալ ազգ իւր խորին և անկեղծ երախտագիտութիւնը ջերմեռանդութեամբ բացատրելով, և բազմութիւն ստորագրութեամբ և կնքօք վաւերացնելով զայն, բարձրագոյն Սեյիտ Վալիդեօսման անձամբ գացին առանձին և յանձնեցին նոյն ազգային աղերսագիրը, աղաչելով որ վեհափառ կայսեր մատուցանէ զայն:

Այս երախտագիտական ազգային ինքնայոծոր յայտարարութիւնը անշուշտ նշանակութեան արժանի դէպք մըն է, և զօրաւոր պատուաւանի անհիմն մեղադրանաց, զոր օսմանեան կառավարութեան հակառակորդ օրագիրները չեն գտնար իր ընկեր ընդդէմ օգոստոսի ամսու կայսեր խոհեմ և բարեխնդր կառավարութեանը:

Կոստանդնուպոլսոյ Ռուսաց դեսպանատան ամսօրն խորհրդոյ բարձրագոյն մօսիւ Վալապին՝ ամսօր 5-ին մեկնեցաւ Օսթա վերադառնալու իւր հետը տանելով Վարձրագոյն Վրան պատու խանդ առ վերջաբան ազգ արարութիւնն Ռուսաց կառավարութեան: Այս պատուաւանք բարձրագոյն Ռէշիտ փաշային մէկ նամակին մէջ պարունակեալ է, որ յուղարկեցաւ առ Ռուսաց կառավարութեան արտաքին գործոց պաշտօնեայ փոխմարտի Նիքոլայ Կոմար: Նիքոլայ նամակը գաղղիսներէ լեզուով գրեալ է, որով բարձրագոյն փաշան կրճատեցանք, թէ օսմանեան կառավարութիւնը կը պարտաւորի մերժել Ռուսիոյ տէրութեան պահանջները, նոյն իրաւանց

համար, զորս Մեծիկոյն իշխանին յայտնած էին: Ռէշիտ փաշան կը յարէ նաեւ, թէ ինքը մեծ փառահաւթի ունի օգոստոսի ամսու Վիկտորիոս կայսեր օրագրութեան և վեհափառական զբաղմունքը և անոր աշխարհածանօթ ուղիղ գաղափարութեանը վրայ, որով վերադառնալու ընդարձակութիւնը և հետեւարար այնպիսի դէպք մը պիտի չբարձրահար յայտնան պարագաներէն, որ օսմանեան երկրին վրայ յարձակում մը համարուի:

Վարեկամ տէրս թեանց խորհրդոյն համեմատ բարձրագոյն Ռէշիտ փաշային նամակը՝ այս վեճը բարեկամօրէն լուծեցնելու համար արժանաւոր կերպ մը յառաջ կը դնէ: Վանդի կը հաստատեն թէ նոյն նամակին մէջ գրուած է, թէ Վարձրագոյն Վոնէն կը յուսայ որ Ռուսաց կառավարութիւնը պիտի զգայ անկարելիութիւնը որուն մէջ կը գտնուի օսմանեան տէրութիւնը ընդունելու համար Ռուսիոյ տէրութեան պահանջները: Եւ այս անկարելիութիւնը ինչպէս որ արժանի է իմացուցելու, Վարձրագոյն Վոնէն յայտնում պիտի փութայ արտաքին կարգի դէպքան մը յուղարկել ի Վեդրուպոլսի և բանախօսութիւնները նորոգելով Ռուսաց կառավարութեանը հետ՝ այնպիսի կարգադրութեան կերպ մը գտնեն, որ օգոստոսի ամսու Վիկտորիոս կայսեր հաճելի ըլլայ, և միանգամայն Վարձրագոյն Վրան անկախութեանը և իւր վեհափառութեան իրաւանցը չի գալի:

Արդեւ և իցէ ահագին պատրաստութիւններ կը ըլլան առայժմ ի Կոստանդնուպոլսի և անոր շրջակայները: Բազմաթիւ Ռէպլիկ զօրքեր անգաղար կը հասնին Ռուսաստանի նահանգներէն, և իսկոյն զանազան գնդացի մէջ կը գործեն: Արհաստատեն թէ կայսերական կանոնաւոր զօրաց թիւը որ առայժմ ամէն հարկաւոր պաշարներով պատրաստ է քաղաք, 300 հազար հոգի կը հասնի բաց ի կամաւոր զօրաց գնդերէն, որոնք 40 հազարէն աւելի են:

— յոսնալ ար. Վանապիւրիսի օրագիրը հետեւեալ ծանրակշիռ յօդուածը կը հրատարակէ յունիսի 12-24 թերթին մէջ:

«Եւրոպայի հասած ամսօր 4-16 թուով արժանահաստ գիրքերը կրճատեցանք մեզ, թէ մօտեք Ռուսաց զօրքը պիտի մտնեն Մարտի 15-ի և Վալաքիայի իշխանութեանց մէջ: Այլ Վալաքիայի ամսօր 6-18-ին կը գրեն թէ մօտե Հալքիսիոյն, որ Ռուսաց ընդհանուր հիւսպատու է ի Վալաքիոյ, ու նոյն օրը մեկնած էր Եւրոպայի թաւր, երկու օր առաջ արտաքին կարգի ուղի հանգիստով մը լուր տուած էր թէ Վարձրագոյն իշխանը, որուն յանձնարած է ընդհանուր հրամանատարութիւնը յիշեալ իշխանութեանց մէջ մտնելու զօրաց, հրաման ընդունած է սահմանադրութեան անցնելու»:

Պրոսպեր Լանգլէսի օրագիրը յունիսի 2-14 թուոյն մէջ կը կարգաւորէ:

«Եւրոպայի ինքնայն փոխը երթալով կը նուագէ Նիքոլայ և Վալաքիոյ գլխաւոր օրագիրները հետգնեալ կը համաձայնեն մեր ի վաղուց անտի ունեցած գաղափարին, և կը խոստովանեն թէ, թէպէտ մինչև զայսօր խաղաղութեան անվտանգութեամբ կառավարեալ հաստատութեամբ տալիս փութեալ չէ, սակայն մեծամեծ հաւանականութիւններ կան: Վերջապէս կը կարծուի ընդհանրապէս թէ Ռուսաց զօրքը Վանուքեան իշխանութեանց երկրէն պիտի մտնեն, բայց Վանուքեան աղակալի երկրներուն դէմ թշնամութեան գործ մը պիտի չիցցնեն, թող տալով որ քաղաքական բանախօսութեամբ լուծենայ մնացեալը»:

«Վերջապէս Ռուսաց դեսպանը՝ յունիսի 10-ին երկար այցելութիւն մը ըրեր է նոյն մայրաքաղաքի Նիքոլայ դեսպանին, և այս դէպքը նշանակութեան արժանի կը համարեն ամենքը: Բայց յայտնենք կը հաստատեն թէ Ռուսաց դեսպան Միլեյնտօք սեպտեմբեր երկար խորհրդակցութիւն մը ունենալով Վաստիոյ արտաքին գործոց պաշտօնէին հետ, հաստատուն կերպիւ մը ծանուցեր է թէ իւր Նիքոլայի բոլոր արտիւ կը փափաքի անվտանգ արհեստ զխաղաղութիւնը, և թէ պիտի չիքաշէ սուր բայց միայն երբոր վերջին ծայրը հասնելու ըլլան գործքերը»:

«Եւրոպայի նշանաւոր դէպք մը կը հրատարակուի

այսօր յոսնալ ար. Վանապիւրիսի օրագիրը մէջ. որ կը ծանուցանէ թէ Ռուսաց կայսեր արդարութեան պաշտօնեայ Վանին կամ Փարիզ հասած է Վեդրուպոլսի գալով, և կ'ըսուի թէ Վալաքիոյ կառավարութեան քով մասնաւոր պաշտօն մը ունի կառարկելու»:

— յոսնալ ար. Վանապիւրիսի օրագիրը յունիսի 2-14 թերթին մէջ կը կարգաւորէ:

«Եւրոպայի քաղաքական գործոց երեւոյնքին պատճառաւ ծագած անհանդուրժելիութիւնները սակաւ առ սակաւ իրենց սահմանութիւնը կը կորսնցնեն, հանդարտութիւնը ամենուրեք մեջ կը սեղանորթի և խորհրդածութիւնը փրկուեալ փառահաւթիւն մը կը մատուցանէ ամենուրեք ի մասին հաստատուն մնալուն Աւրոպայի խաղաղութեան: Դասն զի վերջապէս աշխարհ ամենայն խաղաղութիւնը կ'ուզէ, և հաստատի եմք թէ նոյն ինքն վեհափառ Վիկտորիոս կայսեր անգամ խաղաղութեան կը փափաքի»:

«Այսպէս ըլլալով, չեմք ուղեր պնդել թէ կը ծանուցնենք այս վեճին տրուելու լուծումը, այլ մանաւանդ հաւանական իսկ է որ տակաւին քիչ մը վտանգաւոր ժամանակներ տեսնամք անցնելու, թէ և բոլոր կառավարութիւնները բարեյոթարութիւն ունեցած ըլլան իրար համաձայնեալ: Բայց որպէս և իցէ անհանգիստ կերպի մեջ թէ չիցցանան անվտանգ արհեստ զխաղաղութիւնը, երբոր կառավարութիւնները մտերմութեամբ կ'աշխատեն անոր վրայ»:

«Այս ներքին համոզումն, որ մեր մտաց մէջ անյողորդ կերպիւ հաստատուէ, և կը արեւնաւ Նիքոլայի կենցաղագրեալ անձանց վրայ, և ընդհանրապէս ինչպէս նշանակուած է իւր անհատական օրըստ օրէ կը յառաջդիմէ և կը տարածի»:

«Նիքոլայ նաւատորմաց յուղարկումն, զոր կը հրատարակէ Միլեյնտօք պաշտօնական օրագիրը, ու միայն ընդհանրապէս համարուած է թէ օգտակար պիտի ըլլայ խաղաղութեան հաստատուն մնալուն, այլև հաւատարմութեամբ թէ խաղաղութիւնը մեծ վտանգի մէջ պիտի չիմնայ, թէ կենցաղագրեալ անձինքը միջոցներ պիտի գտնեն այս խնդիրը լուծելու ամէն կողմանց պատիւը տեղի տալու պահով, վերջապէս այսպիսի վտանգութիւն մը ունենալուն համար է որ ամէն զգուշութիւնները ի գործ կը դնեն որպէս որ կարելի է սպառնական երեւոյնքը վերցնելու Նիքոլայի և Վալաքիոյ նաւատորմաներէն, և արդէն յօժարամտութիւն մը կը ցուցնեն զիջումներ ընելու: Եւ ինչպէս օրագիրը որ երբեմն այնքան բարեբաղեալ էր, կը նշանակուի այժմ Ռուսաց զօրքերուն Վանուքեան իշխանութեանց մէջ մտնելը, զոր ութ օր կայ, իբրեւ պատերազմի հրատարակութիւն կը համարեն, խրատ կու տայ օսմանեան կառավարութեան որ իւր զօրքը Վանուքեան ալ եղբորը պահէ պաշտպանողական կացութեամբ մը, յայտ անելով թէ, թէ և Ռուսաց զօրքը մինչև ի Վալաքիոյ երկրան, ինքը (Վալաքիոյ օրագիրը) չիկարծէր թէ այս բանին համար անգղիացի և գաղղիացի ծովապետները պարտք կամ իրաւունք ունենան Վարդանիսի նեղուցը անցնելու»:

«Երբոր գիտէ մէկը բարձր կացութիւն ուր կը գտնուի Վալաքիոյ քաղաքական անձանց մէջ, կրնայ հասկնալ ինչ որ այս խրատները կը նշանակեն, և փոխանակ կարծելու, ինչպէս մասնք գուցէ կը մտածեն, թէ այս խրատները նախագուշակութիւն մը են Նիքոլայ քաղաքականութեան փոփոխութեանը, մեք կը կարծենք թէ մեծ վտանգութիւն կը ցուցնեն Վալաքիոյ մեծ տէրութեանց խաղաղասիրական յօժարամտութեանը, և թէ Վեճին իրիտանիոյ կառավարութիւնը, որ այս ամէն վտանգաւոր պարագայից մէջ ուրիշ կամք և ուրիշ քաղաքականութիւն մը չունեցաւ խաղաղութիւնը հաստատուն պահելէն ի զատ, արդէն արժանի կը համարեն, իւր այս նպատակին հասնելու համար, աւելի զիւրովն ըլլալ առ հաշտութիւնն, քան զոր չէր ունի օր կայ, երբոր գուցէ ոյսօրու անէ նուազ վտանգութիւն ունէր միւս կառավարութեանց խոհեմութեանը և իմաստութեանը վրայ»:

Իրագրոյ նախնիմաց թերթի մը ծանուցինք թէ Վանիկոյ Վիպեալ Վահանգիսի Վեճիկիսի անուն Ֆոէկաթը Կոստանդնուպոլսի հասաւ: Այս ֆոէկաթին մէջ ընդապետ (քանոսոր) Սերիկիսի կայ, որ ամսօր 3-ին Չրազանի պալատը երթալով ընկերութեամբ յիշեալ հասարակապետութեան գործակալաւոր միտար Վրանիսի օգոստոսի ամսու կայսեր ներկայացաւ, և այս առթիւ համառօտ ատենախօսութիւն մը ըրաւ, ուրուն ահաւաստի թարգմանութիւնը:

«Օգոստոսի ամսու տէր, Սեյիտ Վալիդեօսման օրագիրը յունիսի 2-14 թերթին մէջ կը կարգաւորէ»:

նալ ձեզ նման թագաւորի մը առջեւ, որուն ազատակր և լուսաւորեալ նպատակները փառաւորեցին իւր անունը թէ՛ նոր և թէ՛ հին աշխարհքին մէջ: Ներդրար Զանքը, զոր շերտի կէտութիւնը ի գործ կը դնէ ձեր կայսերութեան յառաջդիր թեւերը և ձեր ժողովրդեան բարօրութիւնը և երջանկութիւնը ապահովելու համար, ամէն ազգերը որանշարունակ և անընդհատ համակրութիւնը ստացաւ: Շերտի կէտութիւնը ուրիշ աշխարհեան մը մէջ այնչափ վերջին աստիճանի կառավարութեան համարումը և ժողովրդեան բարեմակարթութիւնը ստացած է, որչափ Վերելիայի Սիւրբեալ Նահանգացի մէջ և կողմից մէջ և հաւատարմութիւնը թէ Վահերէցին և Վերելիայի ժողովրդեան զբաղմունքը կը յայտնէ, երբ Շերտի կէտութեան առջեւ կը դնէ անոնց խորին համակրութեանց յարգանքն հաւատարմութիւնը ի մասին ձեր անձնական երջանկութեանը և ձեր իմաստուն և սրբիկ շտկաւարութեան յառաջդիրութեանը և անկախութեանը: Կարգեմ զՎահաւորութիւնը ձեր որ հաճեցիք թող տալ ինձ որ ներկայացնեմ ձեզ իմ հրամանատարութեան ներքեւ եղած ֆուկաթին պաշտօնատարները:

Վահաւոր Սուրբեալ մեծ մարդասիրտ թիւն յուցուց Սթրինկեմ գնդապետին քաղաքավարական խօսքերուն, և անոր Արտանդնուպօլիս գալուն համար իւր կայսերական հաճութիւնը յայտնեց. նմանապէս ուրախ եմ, ըսաւ, որ Նարձար գոյն Վրան և Վերելիայ Սիւրբեալ Նահանգացի մէջ եղած բարեկամական կապակցութիւնները որ ըստ օրէ ևս առաւել կը հաստատուին:

Սթրինկեմ գնդապետը նոյն իրիկունը մեկնեցաւ իրեն ս երթալու, ուր կը գտնուէի Վերելիայ Սիւրբեալ Նահանգացի նաւատորմը:

Բնոյս 11ին հինգշաբթի օրը սրբոյ Հովհաննէսի գալոյն զարդոյն աշակերտութեան մասնաւոր խորհրդարանութեան հանգէր կատարեցաւ ի ներկայութեան վիճակիս հոգեւոր առաջնորդ գերապետի տէր Պօղոս սրբազան արքեպիսկոպոսին, և քանի մը ուսու մեական անձանց: Վաճառ գալու աշակերտութիւններ խիստ արժանաւոր կերպիւ պատասխաններ տուին իրենց եղած հարցմանցը, որ կը վերաբերէին հայկաբանութեան, Հայոց պատմութեան, աւետարանական ծանօթութեանց, և սկզբանց քրիստոնէական վարդապետութեան, աշխարհագրութեան, բնական պատմութեան և թուաբանութեան: Այս գալոյն որ եօթը պարկեշտաւոր օրերուց կը բաղկանայ, ամենէն յառաջագէմն է և յատուկ գովութեան արժանի, և ժողովականաց մտերիմ գոհունակութիւնը ընկալաւ: Երկրորդ գալոյն որուն մէջ կը գտնուին ինը աշակերտութիւն, նմանապէս ըստ բաւականին յառաջացեալ են հայերէն համաձայնութեան, և վերջիցեալ օգտակար ծանօթութեանց մէջ: Երրորդ գալոյն որ բարձրագոյն է, բերականութեան ութը մասանց վարչութիւններու, և իրենց ուսմանց տարիքանին համեմատ արժանապէս պատասխանեցին:

Վարկի օրը ամսոյ 14ին պարգեւաբաշխութեան ընդհանուր հանգէս մը եղաւ. ուր ներկայ էին սրբազան Վաճառագը, ազգային հոգաբարձուները և աշակերտութեան ծնողքը: Ինչորձակ գրտեղանի մը վրայ դրուած էին օրիորդաց գրաւոր աշխատանքներու փորձերը, նմանապէս բազմաթիւ ձեւապարտ աշխատութիւններ՝ ասոյնագործութեան վերաբերեալ, որոց վրայցը մանրամասն տեղեկութիւններ տալը խիստ երկար կ'ըլլայ: Բաւական կը համարուէր ըստ թէ ամէնքը սրանցանց այս գնահատան գործերուն բարակութեանը և կատարելութեանը վրայ. որ շնորհը սրտիւ կ'ընէ թէ հայկազուն վարժապետութեան և թէ իւր աշակերտութեանց: Պարգեւաբաշխութիւնը սկսեցին առաջ յառաջագէմ աշակերտութիւններէն մէկը այս հանգիսին պարագայից յարմար պատուական ծառ մը կարգուց. որ մեծ հաճութեամբ և ծափաբարձութեամբ ընդունուեցաւ:

Երրորդ հանգիստի օրը գոհ և եղան Հովհաննէսի գալոյն զարդոյն ըստ կարի բարեկարգ յառաջդիրութեան, որուն համար կը պարտաւարիմք մեր շնորհակալութիւնը մատուցանել անոր պատուելի վարժապետին, նմանապէս յարգոյ և բարենտխանձ հոգաբարձուաց Վերելիայի Սիւրբեալ Նահանգացի, Երթեան Վաճառագը և անոնց բարեկամ օգնական Սաղաւտեան

Յովհաննէս աղային, որոնք ազգասիրական և աշակերտական յանձնառու եղած են թէ՛ Սեւ, թոյնեան և թէ՛ Հովհաննէսի զարդոց հոգաբարձութեանը, և անխնայ փութալան ինտմօր ի գործ կը դնեն իրենց ծանր պաշտօնը:

Երկու շաբթի օրը սրբոյ Հովհաննէսի տօնախմբութիւնը ըրալով, զարդաւոր աշակերտութիւնները սպիտակագլու գարգալեալ սուրբ Սուրբ Երեմիայի եկեղեցւոյ մէջ ներկայ գտնուեցան սուրբ անմահ պատարագին, որուն ըմբռնելն եւս պատարագիչ քահանայի հանգեմ զարգը և կըրթիկոսք յիշեալ օրիորդաց զարդաւորը և նոյն հոգեւոր երգոց ներդաշնակութեամբ, ուր Վահաւոր մը կարգադրելով և պահպանելը զրուցելով հանգեւոր վերջացաւ:

Իրիկունը է մեզ ծանուցանել թէ Վրան Սիւրբեալ Նահանգացի, որ մեծարդոյ և բարեպաշտ Վարդան և Վահաւոր աղայից արդեամբ ընկալած է ու անոնց ազգասիրական ջանքերը և առատաձեռն ծախիւքը կը կառավարուի, բաւականապէս բարեկարգեալ և յառաջդիրութեան մէջ կը գտնուի: Այս զարդաւոր վարժապետը՝ Յարութիւնեան պատուելի պարոն Վահան Սաղաւտեան է, որ Իզմիրի Սեւրոպեան զարդոյն մէջ ըսած է իւր ուսմանը, և իւր բարեխախտ հոգաւորութեամբ և սրբիկ ընթացիւքը նոյն քաղաքին հասարակութեան բարի համարումը ստացած է:

Յունիսի 7ին կիրակի օրը այս զարդաւոր աշակերտացի հարցաքննութեան հանգէր կատարուեց, ի ներկայութեան հայազգի բնակչաց Վաճառագը. որոնք մեծապէս գոհ են եղեր անոնց ըստ կարի յառաջդիրութեան, քանզի աշակերտները լաւ պատասխաններ տուած են բերականութեան, Հայոց պատմութեան և քրիստոնէական վարդապետութեան սկզբանց վրայ: Հարցաքննութեան վերջը՝ յառաջագէմ աշակերտներէն մէկը՝ այսինքն Վահաւորեան պարոն Յովհաննէսը՝ ուսումնասիրութեան վերաբերեալ ծառ մը կարգացրէ, զոր յիշեալ պատուելի վարժապետը շարադրեալ էր:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, 15 ՅՈՒՆԻՍԻ

Վաղարշապետութիւնը մեծ շարժման մէջ է: Բարձրագոյն Վաճառ անպակաս խորհուրդ կըլլայ և հարկաւոր եղած պաշտպանողական տնօրէնութիւնները կորուզելու, և ի գործ կը դրուին: Օսմանեան ժողովուրդը մեծ յօժարամտութիւն և ջանքեւանութիւն կը ցուցնէ պատերազմելու թէ՛ հարկը պահանջելու ընդդէմ, և այսպիսի անձնանք երեւոյն եւս անգեմաբ ամէն կերպ պատրաստութիւն կը տեսնուի, առանց հատարակաց բարեկարգութեանը և հանդարտութեանը վնաս մը հասցնելու: Կայսերական փողերանցը անգաղար ռսիկ և արծաթ գրամ կը կտրուի զինուորական պատրաստութեանց ծախքը հոգալու համար, և գրամը առաջմ բաւականապէս առատ է: Բարեկամ տնօրէնութեանց գեղատնայնը, և մանաւանդ Մեծին Իրիկունի կերպիւսին փեմփայլ ըստ Սթրինկեմի տը Սեւեղիքի, շուրունակ խորհրդակցութիւն ունին կառավարութեան գլխաւոր անդամաց հետ: Եւ թէպէտ այս օրինակ արաքոյ կարգի շարժումը կը տիրէ մարաքաղաքի մէջ, և մեծամեծ պատրաստութիւններ կըլլան, ի վերայ այս ամենայնի կենցաղագէտ երեւել անձինքը կը հաստատուն թէ գործերը բարեկամութիւն և խաղաղութեամբ պիտի կարգադրուին: Մանաւանդ այս օրերու ձայն մը տարածուեցաւ, թէ Ռուսաց վեհափառ Վաղարշ Վաղարի կառավարութեան միջնորդութիւնը ընդունել է այս վեճի մէջ:

Կայսերական հրովարտակա Վանիլ փաշան, որ բժշկականութեան արքունի գարդոյն ընդ հունուր վերադարձու էր, արգարութեան բարձրագոյն տանին անդամ անուանեցաւ: Եւ Նեմալ Լատին էֆէնդին՝ որ բարձրագոյն ատենին անգամ էր, բժշկականութեան գարդոյն տեսուչ կարգեցաւ:

Վաղարի տնօրէնութեան նոր գեղական փեմփայլ տը Պրուք սեպուհը ամսոյ 3ին Բարձրագոյն Վաճառ ալցելու թեան գնաց մեծ հանգիստի:

սիւ, և հետեւեալ օրը կայսերական պարտաւորութեամբ օրհոտափառ Սուրբեալ Ներկայացաւ, որ բազում մարդասիրտութեամբ և մեծարանք ընդունեցաւ զիշեալ երեւել պաշտօնատուրը:

Հարանից արքունի շոյնեալ Սեֆիկ աւուն ամսոյ 4ին հասնելով ի Կոստանդնուպօլիս հետեւեալ օրը մեկնեցաւ Վերելիայ երթալու, ուր տարաւ հեղինակի հինգ աւագանները, որ գիշեր ժամանակ հարանապի նաւու մը վրայ յարձակած և նաւապետը չարաչար վերաորած էին, ինչպէս Արշալուստ 340 թերթին մէջ յիշատակուած է: Այս շոյնեալու հետ Հարանից գեղականաւոր սուրբ խորհրդոյ բարաւոր և գիւնադար մօտիւ Վրապերը ևս մեկնեցաւ, և զիշեալ հինգ աւագանները Յունաց կառավարութեանը յանձնելով, ամսոյ 11ին նոյն շոյնեալով վերադարձաւ ի Կոստանդնուպօլիս:

Պատերազմի պաշտօնեայ բարձրագոյն Սեֆիկ մեկնեալ Վերելիայ ամսոյ 8ին Վաճառագը, նու գնաց որ Վահ Օրդուք բերանը կիշայ, և այն տեղ շինուած ամրութիւնները աչքէ անցնելով նոյն օրը վերադարձաւ ի Կոստանդնուպօլիս:

Իրիկուն փաշան, որ խիստ արժանաւոր ընթացք մը ունեցաւ ի Հայկա պատահած դժբաղդ գեղերուն մէջ, հրաման ընկալաւ Վրապերին գալու զինուորական կառավարչի պաշտօնիւ: Այլ Վրապերին կը դրէ, թէ Վերելիայ զորապետ Վահ փաշան, որ Նատուրի պատերազմի ժողովին նախագահ էր, արդէն Կարին հասած է եղեր:

Թահիրի Պարի օսմանեան շոյնեալ զորով թը, որուն մէջ բեռնաւորուած էր պատերազմի և անդեան պաշարներ Նատուրի բանակին համար, ամսոյ 11ին մեկնեցաւ Վրապերին երթալու, ուր ետեւէն քաշեց բեռնատար մեծ նաւ մը, որուն մէջ զինուորներ և զէնքեր կային:

Նոյն օրը Ռուսաց անուն շոյնեալ ևս Վրապերին գնաց զօրք և ձիեր հետ տանելով, ու մեծ նաւ մը քաշելով, որուն մէջ ևս զօրք և ձիեր կային Նատուրի բանակին համար:

Վերելիայ շոյնեալ ֆուկաթը Վահ փաշան որուն մէջ զօրք բեռնաւորեալ էր, ամսոյ 11ին իրիկունը մեկնեցաւ Վաճառ երթալու:

Օսմանեան պաշտօնատարներէն Ֆելիք Սաւաթաֆա փաշան և կայսերական ծովային զօրաց գլխաւոր գործակալ մը ընկերութիւն մեծարդոյ Վարդանեան Յովսէփ աղային, որ ծովայնութեան առաջին թարգման է, ամսոյ 10ին Վեջիք նաւահանգիստը գացին ուր խորք խած են Ներկայ և Վաղարի նաւատորմիները, և օսմանեան կառավարութեան յարգանքը մատուցին անգղիացի ծովայն Տրիստին և գաղղիացի ծովայն տը Վախիլին:

Սիւրբաղաքի Վաղարի խորհուրդ տեսնելով որ Վրապեր երկրը երկու ժամանակ ի վեր աղատ է տարափոխի մահաւորամբ, որոշեց որպէս յետ այսորիկ յիշեալ երկրէն եկած բաները և ճանապարհորդները քառասունքեայ զօր շաբթեան կանոնաց ներքեւ չորուին:

Հաւանական Հայոց գժբաղդ վեճը գրեթէ մի և նոյն վիճակի մէջ կը գտնուի. այսինքն Հասուն գերապետը յամառեալ կը մնայ միշտ իւր կամապաշտ որոշմանը մէջ, և առաջմ իւր իշխանութիւնը ու գաճին պէս կը բանեցնէ: Միւս կողմէն Վերելիայի կառավարութիւնը անհասանելի կերպիւ մոքերնին դրած են յիշեալ արքեպիսկոպոսին ծանր լուծէն աղատիւ որ և իցէ կերպիւ: Այս կառավարութիւնը մօտեւ հայերէն տեղաւոր մը հրատարակեց, որուն մէջ հաւանական Հայոց Հասուն գերապետին անգղիացի Ներկայութեամբ պաշտպանեալ այս հոգեւոր Վաճառագը գործերը կը պատմուին, զորոնք անհնար է որ անտարբերութեամբ կարգայ մէկը: Բանի կարծես թէ Հաւան ի պատուհաս խեղճ հաւանական Հայոց յուղարկած է և կը պաշտպանէ զիշեալ նախագահ Վրապերիսկոպոսը:

Վանոյ 7ին կիրակի օրը ամենապատիւ տէր Յակոբ սրբազան պատրիարքը փառաւոր հանգիստ պատարագ մատուց Պէտրոսի սուրբ Երրորդութեան եկեղեցւոյ մէջ, որուն տօնախմբու-

Թիւնն էր նոյն օրը : Բազմաթիւ ջերմեւանդ-
փողովաւորներ կային զանազան տեսակի սպա-
ռակներ , և անոր լրմնեւանքն ետեւ սրբազան
Պատրիարքը պատարագի զգեստներով և ընկե-
րու թիւ կողերիկոսաց , որոց առջեւ էին կ'երթային
քանակաւոր սպիտակագլու սպաներ մանկունք և
աղջիկներ գլուխներն վարդէ պսակներ դրած ,
վեմամբայլ Տառնան Պողոս ամիրային տունը գը-
նաց , որ և կ'էրկոչուին խիստ մօտ է , և հոգեւոր
օրհնութեամբ միմեքեք զստեմանսն : Այս
հանգիստը խիստ հանդարտութեամբ անցաւ փո-
ղոցէն , ուր ոստիկանութեան զօրքը ներկայ էին ,
հասարակաց բարեկարգութիւնը անփնաս պա-
հելու համար :

— Վերապա մեր օրագրան Պատրիարքը ամսոյս
12ին թարգմտաւ գնաց ի փոխարքայի աշխատե-
լիւն Սեփն Վրիտանիոյ դեպքան վեմամբայլ
լրտ Սթրէթֆորտ տը Ռեյտքիֆին : որ ինչպէս
յայտնի է , մօտերս բարեհաճեալ էր պատուել
զնա իւր յատուկ այցելութեամբ :

Նիգրիոյ երեւոյթական յիշեալ աղետական ի որ-
տը բազում մարդասիրութեամբ և մեծարանք
ընկալաւ մեր սրբազան պատրիարքը : այլ :

— Վսոյս 8ին , որ Սեփն Վրիտանիոյ վեհա-
փառ թագուհւոյն թագադրութեան տարե-
դարձն էր , անդրական շոգեւանները , նմանա-
պէս օսմանեան և Վարդիոյ պատերազմական նա-
ւերը դրօշակներով զարդարուած էին առաւօ-
տէն մինչև երեկոյ , և կէսօրին թնդանօթներ
արձակեցին ի պատիւ տօնախմբութեանս :

Այս առթիւ Սեփն մեկտ պէյը որ վեհափառ
Սթրէթֆորտ խորհրդի քարտուղարն է , և բարձ-
րագոյն տոնին թարգման Վրիտանիոյ պէյը
թարգմտաւ գնացին և օգոստոսական կոյսեր յար-
գական խնդակցութիւնը մատուցին Սեփն Վրի-
տանիոյ դեպքան վեմամբայլ լրտ Սթրէթֆորտ
տը Ռեյտքիֆին :

ԱՐՏԱՐԻՔ ԵՒ ԿՈՒՐԻՔ

ԱՐՏԱՐԻՔ . Սոմոն , 6-18 Յունիսի : Սոմոնի
Բոլի և իւր պանուն օրագրիները , որոց երկուքն
ևս քիչ կամ շատ հաղորդակցութիւն ունին կա-
ռավարութեան հետ , կը պնդեն թէ Նիգրիոյ
կոմսը (Սոմոն տէրութեան արտաքին գործոց
պաշտօնէին օրդին) որ մօտերս Սոմոն հասաւ ,
հրաման ունի իւր կառավարութեանն ոչ միայն
ծանուցանել Սոմոնի Սոմոն գետնային մաս
նաւոր պարագաները վերջին դիպուածոց թուր-
քաստանի , այլ նաև գանգատել Նիգրիոյ կա-
ռավարութեան առջև աղաւթ ընդդիմութեանը
համար՝ զոր լրտ Սթրէթֆորտ ի գործ դրաւ
ի կոստանդնուպոլս Սոմոն տէրութեանը
գէտ : Սոմոնի մէջ ընդհանրապէս կը կարծուի
թէ Սոմոնի Վանուբեան իշխանութեանց մէջ
պիտի մտնէ և շուտով պիտի չեղէ անկէջ : Լրա-
գիրները գրեթէ համաձայն են այս կարծիաց
վրայոք : Վրիտանիոյ օրագիրը այս յորձակման վրա
յօք խօսելով , թէ պէտեւ դաշինքը լուծել է ,
բայց պատերազմի հրատարակութիւն չէ , կ'ըսէ
և կը յարէ թէ այս բանը վտանգաւոր խաղ մըն
է , ու սկիզբ կ'ընայ պատերազմ ծագել թուրքաս-
տանի հետ : քանզի Վրիտանիոյ տէրութիւնները
ամենեւին հաճութիւն չ'են կրնար տալ , կ'ըսէ ,
որ յիշեալ իշխանութիւնները Սոմոնի տէրու-
թեան երկրից հետ միաւորին :

Այլուր թէ Նիգրիոյ կառավարութեան պաշ-
տօնէից մէջ մասնական փոփոխութիւն մը պիտի
ըլլայ , և մանաւանդ կը հաստատեն թէ լրտ
Սթրէթֆորտը ներքին գործոց պաշտօնը ձգելով ,
արտաքին գործոց տեսուչ պիտի ըլլայ :

— Ահնային հեռագրական գծին հասած լու-
րերը կը ծանուցանեն , թէ Սոմոն տէրութիւնը
ընդունեցաւ Վստրիոյ միջնորդութիւնը՝ թուր-
քաստանի հետ ունեցած վեճին մէջ :

ԳՆԱՆԱԿԱ . Փարիզ , 7-19 Յունիսի : Հասա-
րակութիւնը մեծապէս զգալեալ է Վրեւելեան
խնդրոյն վրայոք : որուն պատճառաւ պատրաս-
տութիւններ կը տեսնուին քանի մը գաղղիական
նաւահանգստաց մէջ և մանաւանդ ի Վուլոն :
Նիգրիոյ և Վարդիոյ նաւատորմաց հրաման տը-
րուելը որ Վարդանէի ներդրեցին առջև երթան ,

շատերուն երկիւղ պատճառեց թէ երոպական
ընդհանուր պատերազմ մը շուտով պիտի սկսի
և հետեւաբար միտքերը սկսան գրգռուիլ և ան-
հանդարտութիւնը տիրել սմէնուն վրայ : Վստն
որոյ Սոմոնի պաշտօնական օրագիրը փութա-
ցաւ հետեւեալ յօդուածը հրատարակել այս
դէպքին վրայոք :

« Կայսերական վեհափառութեան դեսպանը
անցեալ մարտի վերջին օրերը երբոր կոստան-
դնուպոլս կ'երթար , իւր հետը ունէր այնպիսի
տեղեկութիւններ և հրամաններ , որով իւր տը-
նօրէնութեան ներքեւ դրուած էր գաղղիական
նաւատորմի ընդ հրամանատարութեամբ տը
Սոմոն ծովապետին , որ արդէն Յունաստանի
ընդերքը կը գտնուէր :

« Այն ժամանակէ հետեւ կոստանդնուպոլս
պատահած դէպքերուն պատճառաւ Սեփն Վր-
իտանիոյ կառավարութիւնը ևս որոշեց՝ մօտե-
տը Սթրէթֆորտ (Վարդիոյ դեսպանին) տրուած
տեղեկութեանցը համեմատ ծանօթութիւններ
յուզարկել լրտ Սթրէթֆորտ տը Ռեյտքիֆին :

« Բայց յայտնաւէ՛ Վարդիոյ և Նիգրիոյ կառա-
վարութիւնները որոշեցին որ իրենց նաւատոր-
միւնները միանալով , անյապաղ մօտենան Վարդա-
նէի ներդրեցին : Սակայն այս բանը զգուշութեան
միջոց մըն է և յոյս կայ միշտ թէ այժմեան դը-
ժուարութիւնները կրնան բարեկամօրէն և խա-
ղաղութեամբ լուծուիլ » :

— Վրիտանիոյ օրագիրը իւր թերթին մէջ որ ի 19
յունիսի , կը ծանուցանէ թէ Սոմոն տէրութեան
փառ կայսրը մեկնել է Օտեսա երթալու :

ՔԱՆԱԿԱՆ ԿՈՒՐԻՔ

Չիւսնիս , 19 Յունիսի :

Նիգրիոյ և Վարդիոյ նաւատորմիւնները , ինչպէս
մեր նախընթաց թերթով ծանուցած ենք , Պէշ-
քա նաւահանգիստը խորխոսեց են , որ Վարդա-
նէի ներդրեցին վեց մըն հեռու է : Նիգրիոյ նա-
ւատորմիւնը ընդ ամէնը 700 թնդանօթ և ութ
հազար զինուոր ունի , և ստիկանի ուրիշ օգնա-
կան նաւեր կ'ըսպասէ : Իսկ Վարդիոյ նաւատորմի-
ւնը ընդ ամէնը 900 թնդանօթ և տասը հազար
զօրք ունի , և նմանապէս ուրիշ օգնական նաւեր
պիտի գան : Ինչպէս կը տեսնուի , այս երկու մի-
տեղեալ նաւատորմիւնները ահագին միջոցներ ու-
նին դէմ դնելու : և եթէ պատերազմը սկսելու
ըլլայ , որ ընդհանրապէս չ'իկարծուիր , յիշեալ
նաւատորմիւնները , ըստ դաշնադրութեանց ,
Տրնտս անգլիոյ ծովապետին ընդհանուր հը-
րամանատարութեան ներքեւ պիտի գրուին : և
ցամաքը ելելու զօրքը գաղղիացի զօրապետի մը
հրամանատարութեան ներքեւ պիտի ըլլան :

— Նիգրիոյ շաբթու չորեքշաբթի օրը ցաւալի
դիպուած մը պատահեցաւ քաղաքիս մէջ , որ
կրնար ևս առաւել վտանգաւոր հետեւութիւն
ներ ունենալ : Վստրիոյ հիւպատոսին հրամանա-
ւը նաւակալարք ոմանք բռնութեամբ ձեռք ձը-
գեցին Հունգարացի փախտական մը և նոյն
տէրութեան Հիւսար անուն պատերազմական
պախիւն մէջ տարին , որ նաւահանգիստը խոր-
խոսեց է : Այս փոխտարանը որ Սթրէթֆորտ Վոս-
թա կը կուգի , Կոստանդնուպոլս ընկերներէն ըլլալով ,
անոր հետ Վեօթահիա և անկէջ Վերիկա գա-
ցած էր և քիչ ժամանակէ ի վեր է որ ի վեր
դարձեր էր : Վստրիոյ հիւպատոսը խանալով
անոր դառնալը , զոր տեղական կառավարութիւ-
նը չէր իմացած , և առանց լուր տալու քաղա-
քիս բարձրագոյն իշխանութիւն , քանի մը նա-
ւակալարաց ձեռք բռնել տուաւ զանիկա :

Այս բանը մեծապէս գրգռեց Հունգարացի
փախտականները և Վերիկայ Միացեալ Նահան-
գաց հիւպատոսարանէն խնդրուեցաւ զիջեալ
Սթրէթֆորտ Վոսթան , ու Սեփն Վեօթահիա անուն Վե-
րիկայ պատերազմական գործիչին հրամանատա-
րը՝ Վստրիոյ պախիւնը գնաց բանտարկուած փա-
խտականը տեսնելու : Նոյն օրը երեկոյն քանի
մը Հունգարացի փախտականներ սրճարանի մը
մէջ Վստրիոյ պախիւնի պաշտօնատարները (օֆի-
սիէ) տեսնելով , անոնց վրայ յարձակեցան ու
երկու հոգի չարաչար վիրաւորեցին , որոցմէ մէ-
կը հետեւեալ օրը մեռաւ :

Իրոք հասարակութիւնը մեծապէս վշտացաւ

այս ցաւալի դիպուածոց վրայ : և քաղաքիս ոս-
տիկանութիւնը հարկաւոր միջոցները ի գործ
դրաւ յիշեալ մարդասպանը ձեռք ձգելու :

— Նիգրիոյ վիճակին բարեխառն առաջնորդ-
քերապատիւ տէր Վարդիէլ սրբազան արքեպիս-
կոպոսը ժամանակէ մը ի վեր աչաց ցաւ ունենա-
լով , ըստ անօրէնութեան բժշկաց՝ օգտփոխութի-
ւնը ընելու համար այս շաբթու ի վեր հասաւ :
ուր արժանաւոր յարգանք ընդունուեցաւ :

— Վստրիոյ 16ին երեքշաբթի առաւօտուն ժամը
7ու կէսին ըստ Վարդիոյ , երկրաշարժութիւն
մը զգացին որ վեց մանրերկրորդի չափ տեւեց ,
Շարժումը արեւմուտքէն դէպ ի արեւելք էր :

— Սոմոնի տաքերը կը շարունակուին միշտ
և ջերմեւանք ստուերի մէջ 28-29 աստիճան
կը նշանակէ ըստ Սեփնի :

ԱՄԵՐԻԿԱՆ ԿՈՒՐԻՔ

Չիւսնիս , 19 Յունիսի :

Սի և նոյն հանդարտութիւնը , զորմէ խօսե-
ցանք մեր նախընթաց թերթին մէջ , կը տիրէ
քաղաքիս առեւտրոյն վրայ : Նիգրիոյ շաբթու քիչ
մը բանուած ոչխարի բուրդ ծախուեցաւ 320
դրուովի առաջին տեսակը և 235 երկրորդ տե-
սակը : Վայոմպուրի նոր հնձոյն մետաքսը ե-
կաւ և անկիւնայէս ծախուեցաւ 140 դրէն օխան :
Այս գինը ըստ երեւմանց պիտի բարձրանայ :

— Երբ օրը քա-

Նիգրիոյ քաղաքիս խոսքն ,

Օտեսան լիւսն 108 շաբթու հաշուելով :

Սոմոն 115 1/2 — 116

Սթրիֆա 183-184

Թրեստ 420

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

ԹՕՓԱՆ ԸԵՑԹԱՆ ՀԻՔԵԱՑԵՍԻ
ՆԻԼՏԻ ԻՎԱԼԻ

Այս պատմական գիրքը , որ լրագրուած անուն գաղղիացի ե-
րկու մասնազգրին գործն է , իւր օգտագործ և զուարճալի պա-
մուծութիւններով , ու բարոյական ազդարարութիւններով հաշ-
կաւոր հանդիսացած է գրեթէ բոլոր Եւրոպայի մէջ : Գրուե-
ցի փրանսիական հեղինակը քիչ մը անապատութեամբ կը պատկերար-
մարդկային մարմնները որոց վրայ որ դիտած է , առանց ուր-
իշ անգիտելի ընկերութեանն այս ինչ կամ
այն ինչ դատուն կը վերաբերին : Եւ անշուշտ այս պատճառաց
համար պիտի ըլլայ , որ Հաստան գերապայծառին կողմէն ար-
գիւնեցաւ այս գրքին ընդդէմը իւր սովորական ժողովր-
դեան : Բայց և այնպէս հաստանի եմք թէ այս գրքը բաւա-
կան է ուսումնասիրելու յատկապէս հասարակութեան հետաքը-
բութիւնը արթնցնելու այս նոր թարգմանութիւնը կարգաւոր
համար , որ հայերէն գրով և թուրքերէն լեզուաւ տպուել է ի
Կոստանդնուպոլս , ի տպարանի պարոն Յովհաննէս Միւհի-
տիանի : Ահա քիչ մը համարձակ ուսումնական և բարձրագոյն
թարգմանի վրայ գովասանք գրել , ըստ որում իւր համոզ-
գի եղաւ ըստ որում թարգմանը համար մինչև ցայսօր ձեռք գաղթած
աշխատութիւնները բաւականապէս կը յուսնեն անոր արժանա-
ւորութիւնները և զանապա միջբերել :

Այս գիրքը կը ծախուի ի Կոստանդնուպոլս Մեքան քա-
ղաքի ըստ ըստ ըստ գրքատնոց քով : և ի զմիջ Սթրիֆա
Արտատան գրատունը : Գինը 20 դրուով է :

Իսկ որո՞ւմ աշխարհիս մէջ եղած բարեփոխեցն ամենեւն
առաջինը և հարկաւոր մարդոյս առողջութիւնը և կեան-
քն է : Վստն որոյ իւրաքանչիւր գերապատան և պարա-
տորի , որ քաղաքի բնակիչը ըլլայ , ծանուցել է իւրա-
քան , հարկը պահանջելու ժամանակը , ամենեւն ծառայար
և պարիշաթ Բեթիլիէրը նոյն պէտեւր : Ահա այսպիսիներէն
Բեթիլիէրը մէջ յարգի քիչ լարեթի Սթրիֆա , որ Բեթիլ-
իւնիսիսիս արեւաբար արթնցաւ Վեթիլիէրը և Վալեյ-
մէջ որ երկու ծառայար բնակեցաւ : Բանի մը ամիս մի-
այն կայ , որ Փարիզէն վերադարձաւ ի Օթոմանիս իւր
հայրենիքը , և ըստով հասարակութեան համար մը և հա-
մարմնիս արապաւ իբրեւ գիտնական , փոքրատուն , իւ-
նամար և մարտաւեր Բեթիլիէրը :

Յարգի քիչ լարեթի Սթրիֆա քաղաքի մը Փարիզէն հեռա-
լանողը զանապա անպաշտօններու քարման ամենեւն
հարկաւոր եղած իւրեք և իրենցիւնը ևս պարագծ է :

Հրատարակել և տեղ լրագրոյս :
Վրիտանիոյ . Պալատարանի :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՎԵԼԱՅԻ ՄԱՍԻՆ
ՅԵՒԵԼ ՈՒՄԵՆ